**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/42216-2019

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-253-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1237 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-253-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-253-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ:

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխություններն ընդունելի չեն, քանի որ՝

1) խնամքի և սանիտարական հատումները հանդիսանում են միջանկյալ հատման տեսակներ, որոնց իրականացման կարգերն արդեն սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 897-Ն որոշմամբ.

2) «խնամքի, սանիտարական» բառերից հետո լրացվող «անտառվերականգնման կամավոր ընտրողական» հատումն անտառավերականգնման հատման ձև է, որի կիրարկման դրույթները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1412-Ն որոշմամբ: Անտառավերականգնման հատումն արդեն իսկ հստակ նշված է օրենսգրքի նույն հոդվածում:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշման 89.1-ին կետի՝ ներկայումս Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակում: Նախարարության կողմից մշակված նախագծում Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի մի շարք հոդվածներ փոփոխվել են, մի մասն էլ ուժը կորցրած են ճանաչվել: Նախարարության կողմից մշակվող նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Ազգային ժողովի քննարկմանը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող Անտառային օրենսգրքի գործող հոդվածը թողնել անփոփոխ և, ըստ անհրաժեշտության, նախագծի դրույթներին անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմ-

բերի 7-ի «Արտադրական նշանակության անտառներում անտառավերականգնման հատումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1412-Ն որոշման մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 սեպտեմբերի 2019 թվականի N 1237 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վարդան Մելիքյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-253-13.08.2019-ՏՏԳԲ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 3
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-253-13.08.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-211-Ն անտառային օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. դ) կետում «անտառավերականգնման» բառից հետո լրացնել «միջանկյալ (մատղաշ, միջահասակ անտառտնկարկներում եւ արտադրական նշանակության հասուն անտառներում)» բառերը,

2. դ) կետում «խնամքի, սանիտարական» բառերից հետո լրացնել «անտառավերականգնման կամավոր ընտրողական» բառերը,

3. զ) կետում «անտառավերականգնման» բառից հետո լրացնել «միջանկյալ (մատղաշ, միջահասակ անտառտնկարկներում եւ արտադրական նշանակության հասուն անտառներում)» բառերը,

4. զ) կետում «խնամքի, սանիտարական» բառերից հետո լրացնել «,անտառավերականգնման կամավոր ընտրողական» բառերը

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

<u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի անհրաժեշտությունը</u>

Հայաստանի Հանրապետության անտառները հիմնականում ***<u>լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության անտառներ են</u>***, որոնք ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, հակաէռոզիոն, հակահեղեղային, հակասողանքային, առողջապահական, կլիմայակարգավորիչ և ***<u>ստրատեգիական գերակա նշանակություն՝ հանդիսանալով էներգիայի աղբյուր:</u>*** Անտառներն օդը հարստացնում են թթվածնով, կարգավորում մթնոլորտային տեղումների քանակը, մեղմացնում կլիման և բարերար ազդեցություն թողնում մարդու առողջության վրա:

Հայաստանը համարվում է սակավանտառ երկիր: Նրա տարածքի միայն 11% -ն է անտառապատ, այն էլ հանրապետության տարածքի վրա խիստ անհավասար է բաշխված: Հյուսիս արևելյան Հայաստանի տարածքի անտառապատվածությունը մոտ 30%-է, հարավայինը՝ 16%-ից չի անցնում, իսկ կենտրոնականը՝ հազիվ 2% -է: Անտառային ֆոնդի 487 հազ. հա-ի 156 հազ. հա-ը անտառազուրկ տարածքներ են՝ բացատներ, քարքարուտներ, ժայռեր, վարելահողեր, խոտհարքներ և այլն: Անտառապատ 331 հազ հա տարածքի բնափայտի ընդհանուր պաշարը կազմում է մոտ 43 մլն. խմ: Մեկ հեկտարի պաշարը 130 խմ է, միջին տարեկան աճը ՝ 1,8 խմ: Անտառապատ տարածության ընդհանուր տարեկան միջին աճը 596 հազ. խմ է (բերված տվյալները 1996թ.-ի դրությամբ է):

Այս պահին գործող ՀՀ Անտառային օրենգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի դ) կետով սահմանվում են անտառաշինության մեջ ընդգրկվող միջոցառումների՝ անտառավերականգնման,

խնամքի, սանիտարական և այլ հատումների իրականացման կարգը, տեղը և եղանակները: Հարկ է նշել, որ անտառաշինական միջոցառումների բաղադրիչ են նաև՝ անտառներն ըստ նշանակության դասկարգելու հիմնավորումը, հաշվարկային հատատեղերի ծավալների հաշվարկումն ըստ հատման եղանակների և այլն: Վերոնշյալ «անտառավերականգնման հատումներ» եզրույթը անորոշ ձևակերպում է և հասկանալի չէ, թե կոնկրետ ինչպիսի կատեգորիայի անտառների համար է կիրառելի և հստակ սահմանվող ինչպիսի հատման եղանակներով, որի արդյունքում առ այսօր այդ եզրույթը կիրառվել է և՛ արտադրական, և՛ պաշտպանական նշանակության անտառներում: Հարկ է նշել, որ Անտառային օրենսգրքում ձևակերպվող եզրույթները կամ սահմանումները հստակ պետք է համապատասխանեն անտառագիտության մեջ ընդունված և օգտագործվող մասնագիտական տերմիններին, սահմանումներին, հասկացություններին: Մեր պարագայում՝ առաջարկվող օրենսդրական փոփոխությամբ հստակ տրվում է, թե կոնկրետ ինչպիսի հատման եղանակներ պետք է նախատեսել անտառաշինական աշխատանքների պլանները կազմելիս՝ խստորեն պահպանելով և հիմք ընդունելով անտառների նպատակային նշանակությունը:

Պրակտիկայում կիրառելով «անտառվերականգնման հատումներ» եզրույթը՝ բազմաթիվ դեպքերում Հայաստանի բնական անտառներում իրականացվել են «միջանկյալ(խնամքի)» հատումներ՝ իր 4 փուլերով (որոնք կատարվում են բացառապես արտադրական նշանակության անտառներում կամ անտառտնկարկներում), մասնավորապես՝

<u>Լուսատվության հատումներ</u>՝ կատարվում են առաջին հասակադասի անտառներում **<u>Մաքրման հատումներ</u>**՝ կատարվում են մատղաշ անտառներում, երբ տնկարկի լրիվությունը 1,0-0,9 և ավելին է: Հատման այս եղանակը կատարվում է տնկարկի մինչև 11-20 տարեկան հասակը՝ կախված ծառատեսակից, նրա ընթացիկ աճից ու խտությունից

<u>Նոսրացման հատումներ</u>՝ կատարվում են 2-րդ և 3-րդ հասակադասի անտառներում՝ նախորդ հատումից 4-6 տարի հետո, երբ տնկարկը նոսրացման կարիք է զգում

<u>Անցումնային (մրջանցիկ) հատումներ</u>՝ կատարվում են հասունացող անտառներում: Նման հատման նպատակն է անտառը ***նախապատրաստել գլխավոր օգտագործման հատման***, որը բնորոշ է արտադրական նշանակության անտառներում իրականացվող արդյունաբերական հատումներին:

Ըստ այդմ այս բոլոր հատման եղանակները օրենսգրքում ձևակերպված լինելով մեկ բառով՝ իրավակիրառ պրակտիկայում նպաստել է բազմաթիվ դեպքերում տարընթերցումների և միաժամանակ իր մեջ ներառել է լուրջ կոռուպցիոն ռիսկեր: Առաջարկվող օրենքի նախագծով Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի դ) և զ) կետերի ձևակերպումները հնարավորինս համապատասխանեցվում է անտառագիտության մեջ օգտագործվող մասնագիտական եզրույթներին, տերմիններին և սահմանումներին:

Օրենքի նախագիծը կազմելիս ուսումնասիրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ն կազմում ներառված անտառտնտեսությունների 2007-2008թ.թ.-ի անտառկառավարման (անտառաշինության) պլանները: Ստորև ներկայացնենք որոշակի կոնկրետ մեջբերումներ՝ մի քանի անտառտնտեսությունների անտառկառավարման պլաններից, որոնք վկայում են իրավակիրառ պրակտիկայում օրենսդրական տարընթերցման և ոչ հստակ ձևակերպման հետևանքով առկա թերությունների, ոչ արդյունավետ և ոչ նպատակային հատումների, բացթողումների վերաբերյալ:

<u>Արծվաբերդի անտառտնտեսության 2008թ. Անտառկառավարման պլան</u>

http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D4%B1%D6%80%D5%AE%D5%BE%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%A4.pdf

Էջ 96. - Ըստ հատման տեսակների վերլուծելիս համաձայն անտառտնտեսության հաշվետվության, մատղաշի խնամքը կատարված է նախատեսվածի սահմանում, իսկ նոսրացման և անցումային հատումները **եռակի և ավելի գերազանցված է, թեև կատարման իսկությունը և որակը հնարավոր չէր պարզել**

Էջ 125. - Տարածաշրջանի առանձնապես բարձր թեքության լանջերի անտառների որոշ տարածքներում, հատկապես համայնքամերձ, նախկին կոլխոզ-սովխոզային տնօրինության անտառներում իրականացված **ինտենսիվ հատումների արդյունքում ակտիվացել են էրոզիոն պրոցեսները**, ստեղծելով բնապահպանական տեսանկյունից **աղետալի վիճակ**

Էջ 161. - Եզրակացություն նախորդ անտառտնտեսվարման վերաբերյալ

Լուրջ բացթողումներ են առկա անտառվերականգնման բնագավառում: Վերջին ստուգիչ շրջանում /1989-2005թթ./ համաձայն անտառմշակույթների հաշվառման գրքի հիմնվել է 1084 հեկտար անտառմշակույթ, որից միայն 9.3 հեկտարն է հիմնվել ոչ անտառածածկ մակերեսում, իսկ մյուսները մայր սաղարթի տակ: Ի դեպ անտառի սաղարթի տակ հիմնված անտառմշակույթների մեծ մասը, հատկապես 1990-ական թվականների հիմնված՝ չի հայտնաբերվել

Էջ 162.

1992թ. և հաջորդող տարիներին ինտենսիվ անտառօգտագործման հետևանքով անտառտնտեսության անտառածածկ տարածքի շուրջ 75%–ում անտառային էկոհամակարգը խիստ քայքայվել և խաթարվել է հիմնական համակեցությունների՝ հաճարկուտների ու կաղնուտների ինքնավերականգնման ունակությունը:

Նախորդ անտառշինության ժամանակ **շինափայտի ելքը անտառվերականգնման հատումների** ժամանակ հաճարկուտներում և բոխուտներում սահմանվել է գրեթե հավասար, որը հատկապես հյուսիսային Հայաստանի բոխուտներում իրատեսական չէ և բնականաբար չի կատարվել:

<u>Գուգարքի անտառտնտեսության 2008թ. Անտառկառավարման պլան</u>

http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D4%B3%D5%B8%D6%82%D5%A3%D5%A1%D6%80%D6%84.pdf

Էջ 80. - Բնափայտային արտադրական ֆունկցիաներ
Ակնհայտ փաստ է, որ այսպես կոչված օրինական անտառանյութի արտադրության պաշտոնական հաշվետվությունը բացարձակապես չի համապատասխանում անտառների իրական վիճակին, որն արդյունք է անտառտնտեսության անտառների շուրջ 80 %-ում իրականացված չհամակարգված ծավալուն հատումների: (Աղյուսակ 40)..... **և այլ անտառտնտեսություններ:**

Իրավակիրառ պրակտիկայում անտառտնտեսությունների կողմից կիրառվում է նաև խնամքի հատումների հետևյալ սահմանումը, որն Անտառային օրենսգրքով սահմանված չէ, այլ օրենքի՝ կիրառման կարգը սահմանելիս աղավաղվել է միջանկյալ հատումների 4 փուլերի հետ: Այսինքն՝ խնամքի հատումները, ***<u>տնկարկի</u>*** (**<u>արտադրական նշանակության</u>**) տարիքից կախված, լինում են՝ լուսատվության, մաքրման, նոսրացման և անցումնային (միջանցիկ), որոնք կատարվում են բացառապես արտադրական նշանակության անտառներում կամ անտառտնկարկներում: Ըստ այդմ, օրենսդրական բացի և տարընթերցման պատճառով առ այսօր Հայաստանի բնական պաշտպանական անտառներում կիրառվում է խնամքի հատումների նոսրացման և անցումային ձևերը, որոնք կիրառելի են բացառապես արտադրական նշանակության անտառներին: Առավել ևս, Օրենսգրքի 3-րդ հոդվածում հստակ սահմանվում է խնամքի հատումներ եզրույթը, այն է՝ *ծառուտում գլխավոր անտառատեսակ կազմող ծառատեսակի աճին խոչընդոտող դանդաղաճ ծառերի պարբերաբար հեռացում*: Որպես փաստացի օրինակ նշենք, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ն 2019թ.-ի **<u>հաստատված</u>** հաշվարկային հատատեղային պլանում որոշ անտառտնտեսություններում՝ բնական անտառների տարածքներում նախատեսված է իրականացնել նման հատումներ՝ այն պարագայում, երբ այդ տարածքներում չկան

արտադրական նշանակության մատղաշ և միջահասակ անտառտնկարկներ կամ արտադրական կատեգորիայի հասուն անտառներ:
Մեկ անգամ ևս նշենք, որ միջանկյալ հատումներ խնամքի նպատակով՝ իր չորս փուլերով իրականացնելը դա արտադրական նշանակության կամ հիմնված անտառտնկարկների համար է կիրառելի:

Նախկին Սովետական միության տարիներին Հայաստանում արտադրական նշանակության՝ բնափայտի շարունակական արտադրությունն ապահովվող անտառներ չենք ունեցել:

Ակնկալվող արդյունքը

Վերջին 25 տարում Հայաստանի անտառները գերշահագործվել են և այդ վնասները հնարավոր կլինի վերականգնել 30-40 տարում՝ խելամիտ միջոցառումներ և օրենսդրական փոփոխություններ իրականացնելով, այլապես սերունդներին կփոխանցենք անկենսունակ, բնական պաշարներով աղքատ և դեգրադացված անտառներ: